ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի ապրիլի 15-ից 17-ն ընկած ժամանակահատվածում՝ Մոլդովայի Հանրապետության մրցակցության խորհրդի և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Գլոբալ հարաբերությունների և զարգացման բաժնի և Մրցակցության հարցերով Բուդապեշտի տարածաշրջանային կենտրոնի հետ համագործակցությամբ կազմակերպված «Մրցակցային քաղաքականության և կարգավորվող շուկաների վերաբերյալ» աշխատաժողովին մասնակցության նպատակով Մոլդովայի Հանրապետության Քիշնև քաղաքում գործուղման արդյունքների վերաբերյալ

1. ***Մասնակցի անուն, ազգանուն և զբաղեցրած պաշտոնը.***

Կարլոս Մարգարյան – Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ՝ **Հանձնաժողով**) մրցակցության վերահսկողության վարչության, գերիշխող դիրքի և պետական մարմինների հակամրցակցային գործողությունների վերահսկողության բաժնի ավագ մասնագետ.

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Մոլդովայի Հանրապետության Քիշնև քաղաք, 2024 թվականի ապրիլի 15-ից 17-ը.

3. Հրավիրող կողմը.

Տարածաշրջանային համագործակցության խորհուրդ.

4. Գործուղման նպատակը.

«Մրցակցային քաղաքականության և կարգավորվող շուկաների վերաբերյալ» թեմայով եռօրյա աշխատաժողով:

5. Գործուղման արդյունքները.

Աշխատաժողովի 1-ին մասը նվիրված է եղել ընհանուր մրցակցության ու վերահսկողության վերաբերյալ առավելությունների և թերությունների բացահայտմանը: Այնուհետև ներկայացվել են էներգետիկ շուկաներում՝ մասնավորապես գազի և էլեկտրաէներգիայի շուկաների մոլդովական և եվրոպական փորձը: Մասնակից երկրների յուրաքանչյուր մասնակցի հնարավորություն է տրվել հակիրճ ներկայացնելու իրենց երկրում էներգետիկ շուկաներում մրցակցության ապահովման և վերահսկողական մեխանիզմների սեփական փորձը:

Յուրաքանչյուր նստաշրջանի վերջում մասնակից երկրները, տարբեր խմբեր կազմելով, իրականացրել են նույն հիպոթետիկ դեպքի ուսումնասիրություն և ներկայացում խոսնակներին, ինչպես նաև թեմայի վերաբերյալ տեղի է ունեցել գաղափարների փոխանակում մասնակիցների միջև: Հիպոթետիկ դեպքի ընթացքում մասնակից խմբերը պետք է ուսումնասիրեին որևէ X երկրում մոլախաղերի շուկայի մրցակցության օրենսդրությունը և փորձեին բացահայտել, թե ինչպիսի

սահմանափակումներ են կիրառվում ոլորտի քաղաքականություն մշակողների կողմից, արդյոք դրանք արդարացված են թե ոչ, և կարող են առաջարկել մրցակցության ավելի նվազ սահմանափակող այլընտրանքներ:

Աշխատաժողովի 2-րդ մասում անդրադարձ է կատարվել Եվրոպայում գազի շուկայի մարտահրավերներին, ինչպես նաև ապագայի հեռանկարներին: Ընդ որում՝ ներկայացվել է ընդհանուր ակնարկ հեռահաղորդակցության շուկայում առկա մրցակցության խնդիրների վերաբերյալ: Հիպոթետիկ դեպքի ուսումնասիրության միջոցով մասնակից երկրների ներկայացուցիչները խմբային աշխատանքի միջոցով բացահայտել են Իսպանիայի հեռահաղորդակցության շուկայում գործունեություն ծավալող որևէ X ընկերության վարքագիծը, փորձել են բացահայտել մրցակցությանը վերաբերող խնդիրները և առաջարկել են կարգավորման այլընտրանքներ, որից հետո մասնակից խմբերը միմյանց հետ քննարկել են յուրաքանչյուր խմբի առաջարկած խնդրի լուծման տարբերակները:

Դասընթացի վերջնամասում Kahoot խաղի միջոցով մասնակից երկրները փորձել են ամփոփել նախորդող օրերի ընթացքում քննարկված թեմաները և գնահատել արդյունքները:

6. Առաջարկություններ և գործուղման արդյունքում ձեռք բերված պայմանավորվածությունները.

Դասընթացի շրջանակում մասնակիցները ծանոթացել են Մոլդովայի էներգետիկ և հեռահաղորդակցության շուկայի արդի մարտահրավերներին, Եվրոպայի գազի շուկայի վերջին զարգացումներին, ինչպես նաև ապագայի հեռանկարներին: Աշխատաժողովի ընթացքում անդրադարձ է կատարվել նաև էներգետիկ շուկաներում առողջ մրցակցության ապահովման և վերահսկողության որոշ մեթոդների: Վերջիններս հնարավորության դեպքում կարող են կիրառելի լինել նաև Հանձնաժողովի քաղաքականության մշակման գործընթացն իրականացնելիս:

Մրցակցության վերահսկողության
վարչության գերիշխող դիրքի և
պետական մարմինների հակամրցակցային
գործողությունների վերահսկողության
բաժնի ավագ մասնագետ Կարլոս Մարգարյան